

կարծած բանն կարելի չէր լինիլ եւ կարէր պատճառ տալ կարծեաց, եթէ երբոր ես ըմբռնեցայ առժամն իմ ամենայն բանն ճշմարտութեամբ, իմ լուրն եւ իմ գիրն հասուցած լինէյին շահին, թէ կալանաւորեցաւ Յեահիշէայ բէկն<sup>65</sup>: Բայց ասին շահին, /232b/ թէ Յեահիշէ բէկն ապստամբեցաւ եւ դառցաւ ի քէն եւ միաբանեցաւ ընդ Ռուստաց եւ քոյ տված նոմայքն մատուց Ռուստաց թագաւորին: Արդ այլ որո՞յ յուսոյ շահն յամառէր, որ լսեց, թէ ապստամբեցայ ես յիւրմէն: Այլ ամենեւին սուտ է եւ կարծիք յունայն:

Հ. Զամենայն եւ զորքան որ գանկատեցիր իմ ազգին, իրաւունք ունիս, եւ զամենայն զոր ինչ որ տարակուսութիւն ունէյի, լուծիր: Մին բան մնաց հարցանելոյ, ապայ ընդէ՞ր այժաբան հակառակ կացին քոյ ազգն նայեւ պարսք եւս:

Պ. Մի՞թէ պատճառն ոչ լար վերոյց, որ ասացի, թէ պատրեցիք զազգն իմ եւ թելադրեցիք զնոսա այնպէս առնել հակառակ ինձ, որպէս որ յուսան, այնպէս արարին եւ համարեցան բարեգործութիւն: Եթէ իմ ազգն միամիտ եւ պարզամիտ չլինէր, ոչ այնպէս հակառակէյին, որպէս որ վերոյց գրեցի, թէ նոքա՞ պարզամիտ եւ դուք՞ խորամանկ, խաբեցիք զնոսա: Նոցա արած հակառակութիւնն ոչինչ համարեցայ, զի ներեցի նոցա, քանզի ոչ գիտեն, թէ զինչ գործեցին, եւ կամ թէ զինչ գործեն եւ յայս ունիմ յԱստուծոյ, որ Աստուած ոչ համարի նոցա մեղ, քանզի միամիտ են: Բայց վայ ձեզ, որ դուք շարշարեցիք եւ ուսուցիք այլոց, զի շարշարեն զիս: Ապաշաւեցէք, գուցէ Աստուած թողցէ եւ ձեզ, որպէս որ ես թողի ձեզ, թէպէտ զրկեցիք զիս ի մարմնաւոր եւ ի հոգեւոր բարեացն իմ, բայց Աստուծով արդիւնաւորեցայ հոգեւորն: Յոյժ շնորհակալ եմ ի ձեռն, որ /233a/ յակամայ արդիւնաւորեցուցիք զիս: Բայց եթէ դուք գիտենայիք, թէ որքան դուք զրկեցիք զձեզ ի հոգեւորաց եւ ի մարմնաւորացն, որ լինելոց էր վասն ձեր, այժմ ես ոչ կարեմ լյայտունել ձեզ: Բայց աղաչեցի Տեառն իմոյ, որ շնոր-

հիցէ անարժանիս այնքան կեան, որ յայտնեմ ձեզ վասն մարմնաւոր բարեացն: Այնժամ եղուկ կարդաք եւ կոծէք զանձն ձեր, բայց վասն հոգեւորացն ոչ է պիտոյց լինիլ ձեզ վարդապետ վասն ձեր, քանզի դուք ինքնին յիմանաք այնմ ժամանակի ամենայն բան:

Հ. Ապա Պարսք ընդէ՞ր հակառակեցան եւ վնասեցին քեզ ...

Պ. Ո՞չ ամաչես կրկին յանդիմանել: Մի՞թէ ոչ լսեցիր եւ ոչ էր բաւական քեզ, որ լար վերոյ պատճառն, որ գրեցի, թէ խաբեցիք զնոսա, եւս եթէ օրինաւոր եւ հաւատացեալ ազգն հայոց խաբեցիք, որ ազգ իմ էին, ապայ ինչ զարմանք է, թէ խաբէյիք ազգն օտար եւ անհաւատն, որ ոչ էյին ազգ իմ, եւ ոչ ցաւէր զսիրտն նոցա վասն իմ:

Այսքանս բաւեսցի վասն սոցայ:

\* \* \*

/253b/ Հ. Դուն մեր երկրի հրաշն ոչ ինչ համարեցար, նայեւ խաբեբայ եւ սուտ ասիր:

Պ. Ապա ընդէ՞ր դուն մեր աշաց շիւղն քննեցիր, որ ես հարկաւորէյի քննել զձեր աշաց գերանն: Դուն զանց արարէր պատուէրն Յիսուսի, որ թողիր զքոյ աշաց գերանն եւ քննեցիր զմեր աշաց շիւղն: Ես հարկաւորեցայ պատասխանել ձեզ եւ զնետս ատելութեան դարձուցանել ձեզ, քանզի դուք շանաք մեր կրօնաւորքն ատելի առնել մեր ազգին, որ մեր ազգն ատէ զնոսա եւ սիրէ զձեզ, հեռանան ի նոցունց եւ մերձենան առ ձեզ, որ եկամուտն կտրի ի մեր վարդապետացն եւ գայ առ ձեզ: Բայց ես գիտացի ձեր հնարն եւ ձեր խաբէյութիւնն լյայտնեցի մեր միամիտ ազգին, որ ոչ պատրեալ անկանին դարձեալ ի ցանձս ձեր, որ այսու բանին աչքն իւրեանց, դարձեալ դառնան առ ծնօղ եւ հոգաբարձու մայրն իւրեանց: Ընդէ՞ր խաբէք զմեր ազգն, եթէ ճշմարտութեան ծառայց լինէյիք, ոչ խրատէյիք մերոցն, թէ գնացէք ի յերուսաղէմ եւ տեսէք յաշոքն ձերօվք ձեր վարդապետաց խաբեբայ լոյսն, այլ առաջի աշացն ձերոց դնէյիք ձեր անթիւ եւ խաբեբայ հնարիւ հաստատած հրաշսն եւ նստէյիք ի լոռութիւն,

65 Եղիա Մուշեղեանի գործածակագ աճուճներից մէկը պարսկական միջավայրում: